NGNGO
NEW GENERATION

2024 | ԶԵԿՈՒՅՑ

ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստան, Երևան 2024թ.

Զեկույցը կազմվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից «Հանրային առողջության ալյանս»-ի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հիմնական բնակչության համար ծառայությունների կայունությունը» ծրագրի շրջանակներում:

Զեկույցի բովանդակության համար պատասխանատու է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն, և այն պարտադիր չէ, որ արտահայտի «Հանրային առողջության ալյանս»-ի տեսակետները:

Զեկույցը կազմեց
Շուշան Խնկոյանը

Դիտարկեցին
Սերգեյ Գաբրիելյանը և Ալինա Միրզոյանը

Ձևավորեց
Լևոն Չիլինգարյանը

© «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն Զեկույցը կամ դրանից հատվածներ օգտագործելիս պարտադիր է հղում տալ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին: Բոլոր իրավունքները պահպանված են

©NGNGO 2025թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 04

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 07

ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 09

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 28

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 06

ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ 08

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 24

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ
Հայաստանի Հանրապետություն

ՆՍՀԿ
«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ

ՄԻՊ
Մարդու իրավունքների պաշտպան

ՄԻԱՎ
Մարդու իմունային անբավարարության վիրուս

ԼԳԲՏ
Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանս

ԹՕ
Թմրամիջոց օգտագործող

ՏՍՏ
Տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդ

ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ
Անձի զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջությունը, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունները և/կամ հարաբերությունների ցանկությունը այլ անձի հանդեպ

ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ
Անձ, որի գենդերային ինքնությունը չի համընկնում ծննդյան պահին վերագրված սեռին

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
Նույն կամ էականորեն նման իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ տարբերակված վերաբերմունք՝ առանց որևէ օբյեկտիվ հիմքի

ՀՈՄՈՖՈԲԻԱ
Անտրամաբանական և չպատճառաբանված վախ, զզվանք, ատելություն, խտրականություն հոմոսեքսուալ (նույնասեռական) անձանց նկատմամբ, կամ հակազդում հոմոսքեսուալ (նույնասեռական) անձանց վարքին և մշակույթին

ՏՐԱՆՍՖՈԲԻԱ
Անտրամաբանական և չպատճառաբանված վախ, զզվանք, ատելություն, խտրականություն տրանս անձանց նկատմամբ, կամ հակազդում տրանսգենդեր անձանց վարքին և մշակույթին:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ) ոչ առևտրային հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1998թ.-ին Հայաստանում: Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է ելնելով մարդասիրական սկզբունքներից՝ նպաստելու հասարակության և հատկապես խոցելի խմբերի հիմնախնդիրների կարգավորմանը:
ՆՍՀԿ-ի առաքելությունն է խթանել իրավահավասարություն և սոցիալական արդարություն՝ մարդու իրավունքների և շահերի պաշտպանության, առողջապահական ծառայությունների հասանելիության, կարողությունների զարգացման և մարդասիրական աջակցության միջոցով:

Մարդու իրավունքների և շահերի պաշտպանության ռազմավարական գործունեության շրջանակներում Կազմակերպությունը խոցելի խմբերի, այդ թվում՝ լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանս (ԼԳԲՏ) անձանց նկատմամբ իրավախախտումների վերաբերյալ պարբերաբար հրապարակում է զեկույցներ՝ բարձրաձայնելով առկա խնդիրները և օրենսդրական բացերը, ինչպես նաև իրականացնում է ուսումնասիրություններ և վերլուծություններ, ներկայացնում առաջարկություններ՝ ուղղված հիմնախնդիրների կարգավորմանը և օրենսդրական բարեփոխումների իրականացմանը: Այս ամենին զուգահեռ Կազմակերպությունը շարունակաբար մասնակցում է օրենսդրական նախագծերի քննարկումներին, հետևում օրենսդրական բարեփոխումների նախագծերին՝ ներկայացնելով իրավունքակենտրոն առաջարկներ:

ՆՍՀԿ-ն 2023թ-ից իրականացնում է «Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հիմնական բնակչության համար ծառայությունների կայունությունը» ծրագիրը (Ծրագիր), որը ֆինանսավորվում է Հանրային առողջության Ալյանսի կողմից:

Սույն զեկույցում ներկայացվում է 2024թ.-ին արձանագրված իրավախախտումների դեպքերի մի մասի նկարագրությունները: Արձանագրված դեպքերի հիման վրա իրականացվել է վերլուծություն, վեր են հանվել օրենսդրական դաշտում առկա բացերը, ինչպես նաև գործնականում առկա խնդիրները: Վեր հանված խնդիրների հիման վրա զեկույցի վերջին բաժնում ներկայացված են համապատասխան առաջարկություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը կազմվել է REAct տվյալների բազայում ներմուծված իրավախախտումների դեպքերի ուսումնասիրության հիման վրա: REAct տվյալների բազայում ներմուծվել են տարեց և երիտասարդ մարդու իմունային անբավարարության վիրուսով (ՄԻԱՎ)-ով ապրող անձանց, ԼԳԲՏ, սեքս աշխատողների, երիտասարդ թմրամիջոց օգտագործողների (ԹՕ), երիտասարդ տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդկանց (SUS), միգրանտների, SUS-ների, կանանց, աղջիկների, տրանս*, քուիր բազմազան գենդերային ինքնություն ունեցող անձանց, ինչպես նաև այլ խոցելի խմբերի շրջանում մարդու իրավունքների իրավախախտումների դեպքերը, որոնք տեղի են ունեցել կամ շարունակվել են 2024թ-ի ընթացքում:

REAct տվյալների բազայից առանձնացվել և զեկույցում ներկայացվել են տարբեր ոլորտներում և տարբեր խմբերի շրջանում արձանագրված իրավախախտումների առավել հատկանշական դեպքերը:

Հավաքագրված տեղեկատվությունը վերլուծվել է ՀՀ օրենսդրության և ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային իրավական ակտերին համապատասխան: ՀՀ ներպետական օրենսդրության մասին առավել պատկերացում կազմելու համար՝ առանձնացված է բաժին, որտեղ նկարագրված են խտրականության վերաբերյալ ներպետական իրավական կարգավորումները:

Վերլուծության արդյունքներով զեկույցը ամփոփվել է եզրակացությամբ, ինչպես նաև ներառվել են հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ, որոնք կարող են նպաստել օրենսդրական բարեփոխումներին և քաղաքականության կատարելագործմանը:

ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՀ Սահմանադրությունը հանդիսանում է Հայաստանի իրավական համակարգի հիմքը՝ երկրի հիմնական օրենքը, որին պետք է համապատասխանեն բոլոր օրենքներն ու իրավական ակտերը: Սահմանադրությամբ ամրագրված է, որ ՀՀ-ն ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետություն է և հռչակել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները:
Հաշվի առնելով ՀՀ-ի անդամակցությունը միջազգային կառույցներին և ՀՀ-ին տրված հանձնարարականները ՀՀ Սահմանադրության ընդունումից ի վեր՝ 1995թ, փոփոխությունների 3 նախագիծ է մշակվել, որից երկուսը ընդունվել են: Այդ փոփոխությունները որակվել են՝ որպես մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների համապատասխանեցում ՀՀ ստանձնած միջազգային իրավական պարտավորություններին:

Սակայն կատարված փոփոխությունները այնքան էլ չեն հարմարեցվել միջազգային պարտավորություններին և կան, որոշակի բացեր, մասնավորապես՝ Սահմանադրությամբ նախատեսված է Խտրականության արգելքը (հոդված 29), սակայն պաշտպանվող հատկանիշների ցանկում որպես հիմք ներառված չեն սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը, իսկ միջազգային կառույցների կողմից տրամադրված հանձնարարականների համաձայն՝ խտրականության պաշտպանության հիմքերի շարքում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը պետք է ուղղակիորեն նշված լինեն:

Նախատեսված «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն առաջին անգամ շրջանառության մեջ դրվել է 2018 թվականին, դեռևս չի ընդունվել, ինչը նշանակում է, որ ոլորտը կարգավորող համապարփակ օրենսդրություն առկա չէ:

2023թ.-ի մարտ ամսին ՀՀ Կառավարության կողմից հրապարակվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագիրը, որի համաձայն՝ մինչև 2024թ-ի ավարտը վերոնշյալ օրենքի նախագծի վերջնական տարբերակը պետք է ներկայացվի Ազգային ժողով: Ձեկույցի հրապարակման պահին՝ 2025թ-ի մարտ ամսվա դրությամբ՝ նախագիծը չի ներկայացվել ՀՀ Ազգային ժողով:

ՀՀ Կառավարությունը՝ ի դեմս Արդարադատության նախարարության, 2024թ-ին օրենքի նախագիծը լրամշակել և փոփոխությունների է ենթարկել: Վերջնական տարբերակում պաշտպանված հիմքերի շարքում կրկին բացակայում է ՍԿԳԻ-ն:

2022թ.-ին ուժի մեջ մտած նոր Քրեական օրենսգրքով (որն ամբողջությամբ ուժի մեջ է մտել 2022թ. հուլիսի 1-ից), խտրականությունը քրեականացվել է: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ հոդվածով սահմանված խտրականության հիմքերի ցանկը լիարժեք չէ, մասնավորապես՝ ՍԿԳԻ-ն բացակայում է: Այս բացը լուրջ խոչընդոտներ է ստեղծում խտրականության հիմքով քրեական գործերի շրջանակում դեպքերին համապատասխան քրեաիրավական որակում տալու, իրավաչափ քննություն իրականացնելու և արդարացի պատասխանատվության ենթարկելու տեսանկյունից: Խտրականության հիմքերի թերի սահմանումը հատկապես խնդրահարույց է խոցելի խմբերի պաշտպանության և միջազգային ստանձնած պարտավորությունների կատարման համատեքստում:

ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՔ 1

Մ.Ա.-ն, ունենալով խնդիրներ Ռուսաստանի Դաշնությունում, մոտ երկու տարի առաջ տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն: Երևան քաղաքի կենտրոնում հիմնել է իր բիզնեսը (ընկերական սրճարան): Սկզբնական շրջանում բիզնեսի աշխատանքները հաջող են ընթացել, սակայն իրավիճակը փոխվել է, երբ Մ.Ա.-ի եղբայրը Մոսկվայից ժամանել է Երևան:

Եղբայրը տեղեկացել է Մ.Ա.-ի գտնվելու վայրի և բացած սրճարանի մասին, որից հետո սկսել է փնտրել նրան: 2024թ.-ի սեպտեմբերի 24-ին եղբայրը այցելել է սրճարան, որտեղ հարձակվել է Մ.Ա.-ի վրա, բռնություն գործադրել նրա նկատմամբ սրճարանում ներկա գտնվող անձանց ներկայությամբ, ապա հեռացել: Բռնության ընթացքում եղբայրը Մ.Ա.-ին մեղադրել է ընտանիքը լքելու և ծնողներին անտեսելու մեջ: Մ.Ա.-ին անվանելով թմրամոլ՝ եղբայրը հեռացել է:

Հաջորդ օրը սրճարանի սեփականատերը, տեղեկանալով միջադեպի մասին, պահանջել է Մ.Ա.-ից դադարեցնել գործունեությունը և վերադարձնել սրճարանը՝ հիմնավորելով, որ նրա եղբայրը տեղեկացրել է, որ Մ.Ա.-ն թմրամիջոց է օգտագործում, ինչը կարող է խնդիրներ առաջացնել իր համար: Մ.Ա.-ն նշել է, որ վճարումները պատշաճ կատարվում է, սակայն սեփականատերը սպառնացել է դիմել ոստիկանություն՝ հայտարարելով, թե Մ.Ա.-ն կկանգնի քրեական պատասխանատվության առջև և կզրկվի ազատությունից:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՏԵՍԱԿԸ

- Խտրականությունից զերծ մնալու իրավունք,
- Պատվի, արժանապատվության և համբավի պաշտպանության իրավունք,
- Անձնական անձեռնմխելիության և բռնությունից զերծ լինելու իրավունք,
- Մասնավոր սեփականության իրավունք և ձեռնարկատիրության ազատություն:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

Թմրամիջոցի օգտագործում:

ԳՈՐԾԻ ԸՆԹԱՑՔԸ

Մ.Ա.-ն չի ցանկացել որևէ իրավական գործընթաց սկսել:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՔ 2

2024թ. նոյեմբերի 16-ին ոստիկանները խուզարկություն են իրականացրել «The Office» թեքնո ակումբում: Նրանք ներխուժել են դահլիճ և սկսել խուզարկությունը: Ակումբի աշխատակիցներից մեկին ոստիկանները ստիպել են, որ իրենց ներս թողնի և ցույց տա բոլոր սրահները: Երբ աշխատակիցը մերժել է, սպառնացել են նրան՝ ասելով, որ եթե դիմադրի, ապա նրան կմեղադրեն ներսում գտնված անօրինական իրերի համար:
Ներխուժելով՝ ոստիկանները խուճապի են մատնել բոլոր այցելուներին, որոնց թիվը մոտ 300 է եղել, այնուհետև սկսել են խուզարկել յուրաքանչյուրին:
Տուժողներից մեկը պահանջել է ներկայացնել իր նկատմամբ խուզարկություն իրականացնելու թույլտվություն, սակայն ի պատասխան ոստիկանը հարվածել է նրան և գցել հատակին, որից հետո մյուս ոստիկանը ձեռնաշղթաներ է հագցրել անձին ու բռնի ուժով խուզարկել: Ոստիկանները հայհոյել և վիրավորել են բոլորին:
Քաղաքապետարանի ֆեյսբուքյան էջում հրապարակված տեսանյութում երևացել է, թե ինչպես են ոստիկանները առանց ձեռնոցների բացում ծալված թղթադրամը ՝թմրանյութեր փնտրելու նպատակով: Բացի այդ՝ նրանք լուսանկարել են իրենց հայտնաբերածը:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՏԵՍԱԿԸ

- Անձնական անձեռնմխելիության և բռնությունից զերծ լինելու իրավունք,
- Խտրականությունից զերծ մնալու իրավունք,
- Պատվի, արժանապատվության և բարի համբավի պաշտպանության իրավունք,
- Խոշտանգումներից, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքից կամ պատժից պաշտպանության իրավունք,
- Կամայական ձերբակալությունից/կալանքից պաշտպանվելու իրավունք,
- Օրենքի առջև հավասարության և պաշտպանության իրավունք:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

Թմրամիջոցի օգտագործում:

ԳՈՐԾԻ ԸՆԹԱՑՔԸ

Ակումբի դռները փակ են՝ կնիքված: Ներսում գտնված մարդկանց բոլոր իրերը մնացել են ներսում, և նրանց արգելվել է վերցնել դրանք: Հարուցված քրական վարույթը գտնվում է ընթացքի մեջ:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՔ 3

2024թ. հունվարի 25-ին Ռ.Ու.-ն Telegram հավելվածի՝«Գեյ ծանոթություններ» խմբում ծանոթացել է մի անհայտ անձի հետ, ով հանդիպման առաջարկ է արել: Հունվարի 26-ի գիշերը Ռ.Ու.-ն որոշել է հանդիպել այդ անձի հետ: Հանդիպումից հետո տուն վերադառնալիս, մեքենայից դուրս գալիս Ռ.Ու.-ն պատահաբար իր իրերը թողել է մեքենայի մեջ: Նա սկսել է բղավել, որպեսզի մեքենան կանգնի, բայց անծանոթը չի կանգնել ու հեռացել է:
Ռ.Ու.-ն դիմել է ոստիկանություն: Ոստիկանությունում նա հայտնել է, թե այդ մեքենան տաքսի է եղել: Ռ.Ու.-ն այդպես է ասել, քանի որ վախեցել է հայտնել, որ այդ անձի հետ ծանոթացել է Telegram հավելվածով: Հարցաքննության ժամանակ ոստիկանները սկսել են հարցնել, թե նա ինչու նա չի ծառայել բանակում, միգուցե «համասեռամոլ» է և այլն: Այնուհետև սկսել են ծաղրել ու նվաստացնել Ռ.Ու.-ին:
Ռ.Ու.-ն վերջիններիս հայտնել է, որ չի ծառայել բանակում, քանի որ ունի ՄԻԱՎ դրական կարգավիճակ: Դրանից հետո ամբողջ բաժնում տարածվել է, որ տարածքում «ՍՊԻԴովկա» է գտնվում:
Երբ ոստիկանները սկսել են մանրամասներ հարցնել՝ «ինչ տաքսի էր, ինչ համարի մեքենա», Ռ.Ու.-ն, գտնվելով նրանց հոգեբանական ճնշման տակ, այլ տարբերակ չունենալով, ստիպված է եղել պատմել ողջ իրականությունը: Դրանից հետո ոստիկանները սկսել են սպառնալ, թե նրա դեմ քրեական գործ կհարուցեն՝ կեղծ ցուցմունքներ տալու համար: Բացի այդ, Ռ.Ու.-ին ապօրինաբար արգելել են դուրս գալ բաժնից: Ոստիկանները ստուգել են նրա հեռախոսը, զանգահարել նրա մայրիկին՝ ճշտելու թե արդյոք մայրը տեղյակ է նրա ՄԻԱՎ դրական կարգավիճակից, ապա նույն հարցով զանգել են նաև Ռ.ՈՒ-ի այլ հարազատներին:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՏԵՍԱԿԸ

- Խտրականությունից զերծ մնալու իրավունք,
- Անձնական անձեռնմխելիության և բռնությունից զերծ լինելու իրավունք,
- Պատվի, արժանապատվության և համբավի պաշտպանության իրավունք,
- Կամայական ձերբակալությունից/կալանքից պաշտպանվելու իրավունք,
- Անձնական կյանքի, բնակարանի անձեռնմխելիության իրավունք,
- Հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունք:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

- Սեռական կողմնորոշում
- ՄԻԱՎ դրական կարգավիճակ

ԳՈՐԾԻ ԸՆԹԱՑՔԸ

Տուժողին ՆՍՀԿ-ի կողմից տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն: ՆՍՀԿ-ն կապ է հաստատել ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակի և ոստիկանության բաժնի հետ: ՄԻՊ-ի հետ համագործակցության արդյունքում անձը կարողացել է դուրս գալ քննչական բաժնից: Իսկ ոստիկանության բաժնի հետ կապ հաստատելուց հետո ոստիկանության աշխատակիցները դադարեցրել են Ռ.Ու.-ի նկատմամբ ճնշումները:
Ռ.Ու.-ի ներկայացրած հաղորդման հիման վրա քննչական գործողությունները շարունակվել են:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՔ 4

Ե.Մ.-ն աշխատել է Երևանի փաբերից մեկում՝ որպես մենեջերի օգնական: Ժամանակի ընթացքում նրա և մենեջերի միջև լավ ընկերական հարաբերություններ են ձևավորվել, ինչի արդյունքում Ե.Մ.-ն մենեջերի հետ կիսվել է իր անձնական կյանքի մասին գաղտնի տեղեկություններով: Մենեջերը տեղյակ է եղել, որ Ե.Մ.-ն նույնասեռական է, և դրան նորմալ է վերաբերվել: 2024թ. փետրվարին մեկ օր Ե.Մ.-ն մենեջերին պատմել է նաև այն, որ ունի ՄԻԱՎ՝ հուսալով, որ կստանա նրա աջակցությունը և հնարավորություն կունենա կիսվելու իր բուժման պատմությամբ, խորհրդակցելու նրա հետ և այլն: Սակայն այդ պահից նրանց հարաբերություններն անսպասելիորեն վատթարացել են: Մենեջերը բոլոր աշխատակիցներին հրահանգել է խուսափել որևէ շփումից Ե.Մ.-ի հետ և մաքրել այն ամենը, ինչին Ե.Մ.-ն դիպչել է: Իրավիճակն այնքան է սրվել, որ մենեջերը սկսել է վիրավորել Ե.Մ.-ին, և սպառնացել՝ արգելելով որևէ մեկին պատմել ՄԻԱՎ կարգավիճակի մասին: Մենեջերը ստեղծել է այնպիսի պայմաններ, որ Ե.Մ.-ն իրեն մեկուսացված ու մերժված է զգացել և ի վերջո ստիպված է եղել դուրս գալ աշխատանքից:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՏԵՍԱԿԸ

- Խտրականությունից զերծ մնալու իրավունք,
- Պատվի, արժանապատվության և համբավի պաշտպանության իրավունք,
- Աշխատանքի, արժանապատիվ վարձատրության և պայմանների իրավունք

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

ՄԻԱՎ դրական կարգավիճակ:

ԳՈՐԾԻ ԸՆԹԱՑՔԸ

Ե.Մ.-ն ազատվել է աշխատանքից: Նա հրաժարվել է նշել այն հաստատության անունը, որտեղ աշխատել է՝ հայտնելով, թե չի ցանկանում էլ ավելի արատավորել իր հեղինակությունը և խտրականության ենթարկվել:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՔ 5

2024թ. հունիսի 1-ի գիշերը Ա.Օ.-ն զբոսնելիս է եղել այգում: Այգու նստարաններին նա հանդիպել է երկու անծանոթ տղամարդու, ովքեր ալկոհոլ օգտագործելիս են եղել: Ա.Օ.-ն մոտեցել է նրանց և հետաքրքրվել՝ արդյոք կարող են իրեն օղի հյուրասիրել : Անծանոթները հրավիրել են Ա. Օ.-ին միանալ իրենց: Ալկոհոլ օգտագործելուց հետո, անծանոթները Ա.Օ.-ին առաջարկել են թմրամիջոցներ: Երեքով միասին օգտագործել են թմրամիջոցներ, որի ընթացքում Ա.Օ.-ն պատմել է, որ վերջերս է ազատվել քրեակատարողական հիմնարկից և չունի բնակության վայր:

Ա.Օ.-ի նախկին ազատազրկման մասին տեղեկանալուց հետո անծանոթները սկսել են նրան ուղղել անպարկեշտ և նվաստացնող հարցեր՝ կապված ազատազրկման վայրերում սեռական հարաբերությունների հետ: Այնուհետև, նշված անձինք Ա.Օ.-ին ստիպել են կատարել իր կամքին հակառակ սեռական բնույթի գործողություններ: Ա.Օ.-ն, գտնվելով ալկոհոլի և թմրամիջոցների ազդեցության տակ, ինչպես նաև վախի պատճառով, հարկադրված է եղել ենթարկվել: Անծանոթները նրան թողել են այգում և հեռացել:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՏԵՍԱԿԸ

- Անձնական անձեռնմխելիության և բռնությունից զերծ լինելու իրավունք,
- Խտրականությունից զերծ մնալու իրավունք

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

Նախկինում դատվածություն

ԳՈՐԾԻ ԸՆԹԱՑՔԸ

Տուժողը գտնվել է խորը ինքնախարազանման և ինքնամեղադրման վիճակում, ուստի չի ցանկացել որևէ ընթացք տալ գործին:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՔ 6

2024թ. հոկտեմբերի 22-ի երեկոյան Շ.Ռ.-ի- եղբայրը, սերիալ դիտելու պատրվակով, Շ.Ռ.-ի նոթբուքն է խնդրել: Շ.Ռ.-ն, առանց որևէ բան կասկածելու, տվել է այն: Ավելի ուշ պարզվել է, որ եղբայրը կասկածներ է ունեցել Շ.Ռ.-ի սեռական կողմնորոշման վերաբերյալ՝ ընկերների ակնարկների պատճառով, և ցանկացել է համոզվել: Եղբայրը ստուգել է Շ.Ռ.-ի նոթբուքում պահվող լուսանկարները, ապա որևէ «ապացույց» չգտնելով՝ բացել է Telegram հավելվածը: Այնտեղ կարդացել է Շ.Ռ.-ի անձնական հաղորդագրությունները իր զուգընկերոջ հետ, ինչպես նաև լսել ինտիմ բնույթի ձայնային հաղորդագրությունները: Դրանից հետո եղբայրը հավաքել է ամբողջ ընտանիքին՝ ծնողներին ու երկու եղբայրներին, և նրանց ներկայությամբ բացահայտել է Շ.Ռ.-ի սեռական կողմնորոշումը: Շ.Ռ.-ն փորձել է հերքել, սակայն եղբայրը միացրել է որոշ ձայնային հաղորդագրություններ: Դրանից հետո Շ.Ռ.-ի հայրը վերցրել է ծաղկամանը ու նետել նրա ուղղությամբ, իսկ եղբայրները հարձակվել են նրա վրա և ծեծի ենթարկել: Մայրը փորձել է պաշտպանել Շ.Ռ.-ին, սակայն չի կարողացել կանխել բռնությունը: Ծեծից հետո Շ.Ռ.-ի հայրը նրան մեկ ժամ է տվել տունը լքելու համար, և արգելել է վերադառնալ ոչ միայն տուն, այլև տվյալ քաղաք:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՏԵՍԱԿԸ

- Անձնական անձեռնմխելիության և բռնությունից զերծ լինելու իրավունք,
- Խտրականությունից զերծ մնալու իրավունք,
- Անձնական կյանքի, բնակարանի անձեռնմխելիության իրավունք,
- Հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունք:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

Սեռական կողնորոշում

ԳՈՐԾԻ ԸՆԹԱՑՔԸ

Տուժողը գտնվել է ծանր հոգեբանական վիճակում և չի ցանկացել որևէ իրավական գործընթաց սկսել՝ կատարվածը դիտարկելով որպես իր կյանքի նոր փուլ:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՔ 7

2024թ. հունիսի 20-ի երեկոյան՝ ժամը 23:00-ի սահմաններում, Ա.Ա.-ն իր ընկերոջ հետ զբոսնելիս է եղել Մաշտոցի պողոտայով: Նրանց հանդիպել են երկու ռուս երիտասարդ: Վերջիններս կտրուկ կանգնել են, սկսել նայել Ա.Ա.-ին և նրա ընկերոջը, ապա բարձրաձայն վիրավորական ձևով հարցրել արդյոք նրանք նույնասեռական են: Ա.Ա.-ն պատասխանել է «Այո»: Ռուս երիտասարդները սկսել են բարձր ծիծաղել՝ նշելով թե չէին պատկերացնի, որ հայերի մեջ էլ «նմաններ» կան: Ա.Ա.-ն պատասխանել է, որ եթե նրանց ինչ-որ բան դուր չի գալիս, կարող են վերադառնալ Ռուսաստան:

Ի պատասխան՝ ռուս երիտասարդներից մեկը գազավորված ըմպելիքը լցրել է Ա.Ա.-ի և նրա ընկերոջ վրա՝ բարձրաձայն հայտարարելով, որ «իրենց նման» մարդկանց պետք է սպանել, ոչնչացնել կամ փակել խցում:

Այդ պահին փողոցում բավականին շատ մարդիկ են եղել: Ա.Ա.-ն և նրա ընկերը, ամոթի և վախի զգացողությունից ելնելով, ստիպված փախել են: Նրանց հետևից ռուս երիտասարդները շարունակել են վիրավորական արտահայտություններ հնչեցնել, ինչպես նաև շշով փորձել են հարվածել նրանց: Ա.Ա.-ն և նրա ընկերը տաքսի են պատվիրել և փախել տուն:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՏԵՍԱԿԸ

- Անձնական անձեռնմխելիության և բռնությունից զերծ լինելու իրավունք,
- Խտրականությունից զերծ մնալու իրավունք,
- Պատվի, արժանապատվության և համբավի պաշտպանության իրավունք:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

Սեռական կողնորոշում

ԳՈՐԾԻ ԸՆԹԱՑՔԸ

Ա.Ա.-ի ընկերը դեպքից հետո փակվել է տանը՝ հայտնվելով դեպրեսիվ և վախեցած հոգեվիճակում:
Ա.Ա.-ն և իր ընկերը չեն ցանկացել դիմել իրավապահ մարմիններին, քանի որ չեն վստահել գործի արդարացի քննությանը և վախեցել են կրկնակի խտրականությունից:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՔ 8

Ա.-ն տրանս անձ է: Իր ծննդյան օրվա կապակցությամբ, «Մաչար» ռեստորանում սեղան է ամրագրած եղել՝ օգտագործելով իր բանկային տվյալները: Ամրագրումը նախատեսված է եղել ռեստորանի առանձնացված սրահում, ինչը հաստատվել էր նախապես:

2024թ-ի դեկտեմբերի 14-ին՝ Ա.-ն ժամանել է ռեստորան իր հյուրերի հետ: Տեսնելով Ա.-ին ռեստորանի մենեջերը ճանաչել է և միանգամից հայտնել, որ ամրագրված սրահն արդեն զբաղված է, ուստի նրանք չեն կարող այն տրամադրել իրեն ու հյուրերին: Բանկի համապատասխան ծառայության հետ երկարատև բանակցություններից հետո պարզվել է, որ ամրագրման ընթացքում որևէ սխալ չի եղել, և ամրագրումը կատարվել է: Այլընտրանք չունենալով՝ Ա.-ն ու իր հյուրերը ստիպված համաձայնել են նստել ընդհանուր դահլիճում:

Ընթացքում, երբ Ա.-ն պատվիրել է խմիչքներ, սպասարկող անձնակազմը երկար ժամանակ չի մոտեցել: Ա.-ն մոտեցել է բարին՝ ճշտելու պատճառը, որտեղ բարմենը բարձրաձայն և բոլորի ներկայությամբ հայտարարել է, որ «իրենք չեն սպասարկում կրկեսի արտիստների»: Ամբողջ սրահի այցելուների ուշադրությունը թեքվել է Ա.-ի վրա: Վերջինս իրեն նվաստացած է զգացել և դուրս գալով ռեստորանից՝ չի կարողացել զսպել արցունքները:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՏԵՍԱԿԸ

- Խտրականությունից զերծ մնալու իրավունք,
- Պատվի, արժանապատվության և համբավի պաշտպանության իրավունք:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

Գենդերային ինքնություն

ԳՈՐԾԻ ԸՆԹԱՑՔԸ

Կատարվածից վիրավորված լինելով՝ տուժողն իր ծննդյան խնջույքը տեղափոխել է այլ ռեստորան: Նա չի ցանկացել որևէ իրավական գործընթաց սկսել:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՔ 9

Ա.-ն աշխատանքի է ընդունվել ակումբում՝ որպես տնօրեն: Իր երկրորդ աշխատանքային օրը նա հանդիպել է ակումբի պարուհուն: Պարուհին ճանաչել է նրան, քանի որ նախկինում ծանոթ են եղել, սակայն երկար ժամանակ շփում չեն ունեցել: Պարուհին տեղյակ է եղել Ա.-ի գենդերային ինքնության մասին, և նրանք նույնիսկ ընդհանուր լուսանկարներ են ունեցել, որտեղ Ա.-ն դիմահարդարված ու կեղծամով է եղել : Պարուհին այդ ամենը պատմել է իր գործընկերներին: Տեղեկությունը շատ արագ հասել է ակումբի սեփականատիրոջը:

Հաջորդ օրը ակումբի սեփականատերը այցելել է ակումբ, որպեսզի անձամբ խոսի Ա.-ի հետ: Ակումբի տերը հարձակվել է Ա.-ի վրա: Գործընկերները մեծ դժվարությամբ են կարողացել բաժանել նրանց: Ակումբի սեփականատերը գոռալով Ա.-ին ասել է, թե բոլորը իրեն ճանաչում են որպես լուրջ մարդու, և ինչպես կարող է նման մարդը թույլ տալ Ա.-ին աշխատել իր մոտ ու արատավորել իր անունը: Նա հայհոյել է Ա.-ին և ասել, որ բոլորը իմանալու են, որ իր ակումբում տրանս անձ է աշխատում: Ակումբի սեփականատերը վազել է խոհանոց և վերադարձել դանակով: Տուժածը վախեցել է,ընթացքում գործընկերները օգնել են նրան փախչել:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՏԵՍԱԿԸ

- Անձնական անձեռնմխելիության և բռնությունից զերծ լինելու իրավունք,
- Խտրականությունից զերծ մնալու իրավունք,
- Աշխատանքի, արժանապատիվ վարձատրության և պայմանների իրավունք:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

Գենդերային ինքնություն

ԳՈՐԾԻ ԸՆԹԱՑՔԸ

Տուժողը աշխատանքի է անցել այլ հաստատությունում: Վերջինս չի ցանկացել բողոք ներկայացնել:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՔ 10

Ս.-ն ապրել է փոքրիկ քաղաքում: Նա հավաքել է գումար՝ գենդերի անցման միջամտություն կատարելու համար: Տուժողը գնումներ կատարելիս է եղել սուպերմարկետում, երբ մի խումբ երիտասարդներ սկսել են հետապնդել նրան և բարձրաձայն վիրավորանքներ հնչեցրել: Այդ երիտասարդներից մեկը բռնել է Ս.-ի ձեռքը, իսկ մյուսները սկսել են գոռալ՝ «նման մարդիկ իրավունք չունեն այստեղ ապրել»:

Երիտասարդները Ս.-ին քարշ են տվել գետի մոտ գտնվող լքված պահեստ և դաժանաբար ծեծի ենթարկել: Նրանք ստիպել են Ս.-ին կանգնել ջրի մոտ և սպառնացել, որ կխեղդեն, եթե «չփոշմանի արածի համար»:

Հաճախորդը ոչինչ չի ասել՝ հասկանալով, որ դիմադրությունը միայն կվատթարացնի իրավիճակը: Վերջում նրան թողել են գրեթե անգիտակից վիճակում, առանց հագուստի, սպառնալով, որ եթե նորից տեսնեն նրան քաղաքում, կսպանեն:

Տուժողը դիմել է ոստիկանություն, որտեղ ոստիկանները ծիծաղել են իր վրա: Ոստիկաններից մեկը նաև ասել է, թե ինչ կյանք, ընտրես, այդպիսին էլ կլինի վերջդ, ապա ավելացրել, որնման մարդիկ արժանի են այդպիսի ճակատագրի:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՏԵՍԱԿԸ

- Անձնական անձեռնմխելիության և բռնությունից զերծ լինելու իրավունք,
- Խտրականությունից զերծ մնալու իրավունք,
- Խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից պաշտպանվելու իրավունք:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

Գենդերային ինքնություն

ԳՈՐԾԻ ԸՆԹԱՑՔԸ

Արդյունքում տուժողը ստիպված է եղել փախչել քաղաքից՝ թողնելով տունը, աշխատանքն ու կյանքը: Մեկ ամիս անց ֆինանսական և հոգեբանական ծանր վիճակի պատճառով նա ինքնասպանության փորձ է կատարել: Բարեբախտաբար, անցորդները ժամանակին օգնություն են ցուցաբերել:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՔ 11

2022 թվականի ձմեռային զորակոչին Ն.Ա.-ն չի ներկայացել զինկոմիսարիատ հանրապետությունում չգտնվելու պատճառով: Արդյունքում, նրա նկատմամբ քրեական գործ է հարուցվել: Քրեական գործի շրջանակներում Ն.Ա.-ն քննիչին հայտնել է իր սեռական կողմնորոշման մասին, ինչի հիման վրա էլ ուղարկվել է փորձաքննության: Փորձաքննության արդյունքում տրվել է ախտորոշում՝ հոգեկան խանգարումներ: Ելնելով այդ ամենից՝ քննիչը որոշել է կարճել նրա նկատմամբ հարուցված քրեական գործը:

Սակայն զինկոմիսարիատին կից ռազմաբժշկական հանձնաժողովը հայտնել է, որ չի հավատում առկա տվյալներին, և Ն.Ա.-ից պահանջել է տրամադրել լուսանկարներ և նամակագրություն զուգընկերոջ հետ, որպեսզի ապացուցի իր նույնասեռական լինելու հանգամանքը: Ի հավելումն այս ամենի՝ Ն.Ա.-ին երկու անգամ ուղարկել են հոգեկան առողջության կենտրոն և պահանջել այնտեղ մնալ 24 ժամ:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՏԵՍԱԿԸ

- Խտրականությունից զերծ մնալու իրավունք,
- Օրենքի առջև հավասարության և պաշտպանության իրավունք,
- Անձնական կյանքի, բնակարանի անձեռնմխելիության իրավունք, հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունք:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

Սեռական կողմնորոշում

ԳՈՐԾԻ ԸՆԹԱՑՔԸ

Տուժողին ՆՍՀԿ-ի կողմից տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն և ցուցաբերվել է աջակցություն ՀՀ ՄԻՊ-ին և Պաշտպանության նախարարությանը բողոքներ ներկայացնելու հարցում:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՔ
12

2024 թվականի ապրիլի 27-ին Ա.Ա.-ն իր ընկերների հետ զբոսնելիս է եղել Երևան քաղաքի «Սիզընս» զբոսայգում, և այդ ընթացքում մի քանի անձինք մոտեցել են և ատելություն ու խտրականություն պարունակող արտահայտություններ հնչեցրել Ա.Ա.-ի և նրա ընկերների նկատմամբ:

Ա.Ա.-ն աշխատում է ՆՍՀԿ-ում, ակտիվիստ է, հրապարակայնորեն բարձրաձայնում է ԼԳԲՏ+ անձանց խնդիրները Հայաստանում:

Անհայտ անձինք հարվածներ են հասցրել Ա.Ա.-ին և նրա ընկերներին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Ա.Ա.-ն ահազանգել է ոստիկանություն, ապա գնացել են հիվանդանոց: Հիվանդանոցում, չնայած տուժածների նկատմամբ խտրական վերաբերմունքին, նրանց ցուցաբերվել է առաջնային բուժօգնություն, և որոշ ժամանակ անց դուրս են գրվել հիվանդանոցից:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՏԵՍԱԿԸ

- Անձնական անձեռնմխելիության և բռնությունից զերծ լինելու իրավունք,
- Խտրականությունից զերծ մնալու իրավունք,
- Խտրականությունից զերծ մնալու իրավունք, Խոսքի և արտահայտվելու ազատության իրավունք:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

Սեռական կողմնորոշում

ԳՈՐԾԻ ԸՆԹԱՑՔԸ

ՆՍՀԿ-ի կողմից անձին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն:
2024 թվականի ապրիլի 27-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կենտրոնական բաժնում նյութեր են նախապատրաստվել, որոնց հիման վրա նախաձեռնվել է քրեական վարույթ:
Ա.Ա.-ն ճանաչվել է տուժող:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՔ 13

2023թ-ի վերջերին Կ.Ա.-ն փողոցում խոշտանգվել է անծանոթների կողմից: Գիշերը, երբ Կ.Ա.-ն, կանգառում կանգնած, տաքսի սպասելիս է եղել, երկու երիտասարդ մոտեցել են նրան և ծիծաղելով հարցրել, թե որքան արժի նրա մարմինը, ապա հայհոյել են: Հաջորդ օրը Կ.Ա.-ն բողոք է ներկայացրել ոստիկանություն, արդյունքում նախաձեռնվել է քրեական վարույթ: Ոստիկանությունում անձը հայտնել է, որ զբաղվում է սեռական ծառայությունների մատուցմամբ: Այդ մասին տեղեկանալուց հետո քննչական գործողությունները դադարել են: Քննիչի կողմից գործի քննությունը միտումնավոր կերպով ձգձգվել է այնքան, որ լրացել է գործի վաղեմության ժամկետը, արդյունքում այն կարճվել է:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՏԵՍԱԿԸ

- Անձնական անձեռնմխելիության և բռնությունից զերծ լինելու իրավունք,
- Խտրականությունից զերծ մնալու իրավունք,
- Օրենքի առջև հավասարության և պաշտպանության իրավունք,
- Արդար դատաքննության իրավունք և անմեղության կանխավարկած:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

Սեռական ծառայությունների մատուցում

ԳՈՐԾԻ ԸՆԹԱՑՔԸ

Դեպքի մասին տուժողը ՆՍՀԿ-ին հայտնել է 2024թ-ի նոյեմբերին: ՆՍՀԿ-ի կողմից տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն՝ քննիչի կողմից անգործության դեմ բողոք ներկայացնելու հարցում:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՔ 14

Յ.Ռ.-ն Հայաստան է տեղափոխվել Ռուսաստանի Դաշնությունից: Ժամանելուց հետո նա բնակություն է հաստատել հարազատների տանը: Հետագայում պարզվել է, որ Յ.Ռ.-ի բարեկամներից մեկը պաշտպանում է Ռուսաստանի Դաշնությունում գործող նոր օրենքները ԼԳԲՏ անձանց վերաբերյալ: Երբ Յ.Ռ.-ի հարազատներից մեկը պարզել է, որ Յ.Ռ.-ն չի կիսում իր կարծիքը և, որ ՌԴ-ում աշխատել է ԼԳԲՏ կազմակերպությունում, վիճաբանել են, արդյունքում Յ.Ռ.-ին վտարել է տնից:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՏԵՍԱԿԸ

- Խտրականությունից զերծ մնալու իրավունք,
- Ազատ տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու իրավունք,
- Խոսքի և արտահայտվելու ազատության իրավունք:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

Սեռական կողմնորոշում

ԳՈՐԾԻ ԸՆԹԱՑՔԸ

ՆՍՀԿ-ն Յ.Ռ.-ին տրամադրել է ժամանակավոր կացարան, աջակցել աշխատանք գտնելու և աջակցություն ստանալու հարցում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի շրջանակներում 2024թ-ի ընթացքում Հայաստանում արձանագրվել է իրավախատումների 120 դեպք, փաստաթղթավորված REAct տվյալների բազայում.



Փաստաթղթավորված իրավախախտումները մեծամասամբ հիմնված են անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա: Արձանագրվել են խտրականության այլ դեպքեր ևս՝ կապված թմրամիջոցներ օգտագործելու, նախկինում դատվածություն ունենալու և այլնի հետ Այնուամենայնիվ, որոշ դեպքերում վերլուծությունը ցույց է տալիս բազմակի խտրականության դեպքեր, որտեղ խտրականության հիմքը ոչ միայն տուժողի սեռական կողմնորոշումն է և/կամ գենդերային ինքնությունը՝ որոշ դեպքերում կապված սեքս աշխատանք կատարելու հետ, իսկ որոշ դեպքերում՝ պայմանավորված ՄԻԱՎ դրական կարգավիճակով:

Արձանագրված դեպքերով հիմնականում խախտվել են անձանց հետևյալ իրավունքները՝

- Խտրականությունից զերծ մնալու իրավունք,
- Պատվի, արժանապատվության և համբավի պաշտպանության իրավունք,
- Անձնական անձեռնմխելիության և բռնությունից զերծ լինելու իրավունք,
- Ազատ տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու իրավունք,
- Անձնական կյանքի, բնակարանի անձեռնմխելիության իրավունք, հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունք,
- Կամայական ձերբակալությունից/կալանքից զերծ մնալու իրավունք,
- Ստրկության չենթարկվելու իրավունք,
- Աշխատանքի իրավունք, արժանապատիվ վարձատրություն և պայմաններ,
- Խոշտանգումներից և անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ մնալու իրավունք,

- Օրենքի առջև հավասարության և պաշտպանության իրավունք,
- Սոցիալական ապահովության և պաշտպանության իրավունք,
- Քաղաքական ապաստան ստանալու իրավունք,
- Ազգային և մշակութային ինքնորոշման իրավունք, կրոնի ազատություն,
- Առողջության պահպանման և բժշկական օգնություն ստանալու իրավունք,
- Արդար դատաքննության իրավունք և անմեղության կանխավարկած,
- Մասնավոր սեփականության իրավունք և ձեռնարկատիրության ազատություն,
- Խոսքի և արտահայտվելու ազատության իրավունք,
- Ստեղծագործության ազատության իրավունք,
- Ընտանիքի և կամավոր ամուսնության իրավունք,
- Հանգստի իրավունք,
- Կյանքի իրավունք:

Իրավախախտումները կատարվել են հետևյալ խմբի անձանց կամ կառույցների կողմից.



Ինչպես ցույց է տալիս առկա վիճակագրությունը, իրավախախտումների զգալի մասը արձանագրվել է անմիջապես իրավապահ մարմինների կողմից: Խտրական դրսևորումներն ու խախտումները տեղի են ունեցել ինչպես այլ գործերով իրավախախտումների կապակցությամբ քաղաքացիների կողմից իրավական

պաշտպանության դիմելու ընթացքում, այնպես էլ իրավապահ մարմինների կողմից իրականացված գործողությունների ժամանակ՝ անմիջական շփման փուլում: Այս փաստը վկայում է, որ խտրականության դեմ պայքարում հատկապես մեծ ուշադրություն պետք է դարձնել իրավապահ համակարգի ներսում գործող մեխանիզմներին, խտրականության կանխարգելմանն ուղղված վերապատրաստումներին, ինչպես նաև խտրականության դեպքերի արդյունավետ արձանագրման և հետաքննության մեխանիզմների կատարելագործմանը:

Վիճակագրությունը վկայում է, որ քիչ չեն նաև այն դեպքերը, երբ անձանց իրավունքները խախտվել են անծանոթ անձանց կողմից: Այն ևս մեկ անգամ ընդգծում է, որ ՀՀ-ում խոցելի խմբերի նկատմամբ շարունակում է պահպանվել անհանդուրժողական վերաբերմունքը, առկա է խարանի և խտրականության բարձր մակարդակ, ինչը դրսևորվում է ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ հասարակական տարբեր ոլորտներում:
Հաջորդ խումբը՝ խախտումների բարձր ցուցանիշով, վերաբերում է հարազատների կողմից իրականացված հանցագործություններին: Մեծամասամբ դեպքերում տուժողները հրաժարվել են իրավական պաշտպանության համար դիմել իրավապահ մարմիններին, քանի որ չեն ցանկացել բողոքներ ներկայացնել իրենց հարազատների դեմ:
Այս ամենը հետևանք է այն բանի, որ ՀՀ-ում խտրականության, խարանի և խոցելի խմբերի նկատմամբ բռնության կանխարգելման քաղաքականությունը շարունակում է մնալ թերի և պահանջում է համալիր լուծումներ՝ ընդգրկելով թե՛ իրավական, թե՛ սոցիալական և կրթական բաղադրիչներ:
Իրավական պաշտպանության դիմելուց զատ նաև նվազում է դիմելությունը բժշկական հաստատություններին, որը պայմանավորված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող մասնագետների կողմից խտրական դրսևորումների առկայությամբ:
Բժշկական օգնություն և սպասարկում տրամադրողների կողմից հաճախ խախտվելեն անձի բժշկական գաղտնիքը, ինչը հանգեցրել է կրկնակի խտրականության: Իսկ որոշ դեպքերում վերջիններս հրաժարվել են բուժօգնություն տրամադրել անձին/անձանց այն բանից հետո, երբ բացահայտվել է ՄԻԱՎ դրական կարգավիճակը կամ սեռական կողմնորոշումը, գենդերային ինքնությունը և այլն:
Այս երևույթը, որն ունի լուրջ բացասական ազդեցություն հիվանդությունների կանխարգելման և բուժման գործընթացների վրա, քանի, որ խոցելի խմբերը դադարում են դիմել բժշկական հաստատություններ՝ վախենալով խտրական վերաբերմունքից կամ բժշկական գաղտնիքի խախտումներից:



Դեպքերից 42-ով անձինք չեն ցանկացել դիմել իրավական պաշտպանության և գործին ընթացք տալ, քանի որ վախեցել են բացահայտել իրենց սեռական կողմնորոշումը, գենդերային ինքնությունը, ՄԻԱՎ դրական կարգավիճակը և այլն, անհանգստացել են իրենց կյանքի և անվտանգության համար, վախեցել կամ չեն վստահել իրավապահ մարմիններին նախկինում ունեցած վատ փորձի պատճառով: Իսկ սեռական ծառայություններ մատուցող անձինք իրավախախտումների գործերով չեն դիմում իրավապահ մարմիններին, քանի որ չունեն իրավական պաշտպանվածություն՝ սեքս աշխատանքով զբաղվելու համար ՀՀ օրենսդրությամբ վարչական պատասխանատվություն է նախատեսվում, ուստի դիմելիս վերջիններս ունեն այն մտավախություն, որ կենթարկվեն վարչական պատասխանատվության:

Փաստացի ՀՀ ոստիկանության համակարգը, որն օժտված է մարդու անվտանգության ապահովման, հանցագործությունների կանխման, բացահայտման և օրենքով սահմանված այլ լիազորություններով վստահություն չունի խոցելի խմբերի շրջանում, ավելին համակարգում դրսևորվող կողմնակալ վերաբերմունքը և տրանսֆոբիայի և հոմոֆոբիայի բարձր մակարդակը բացասաբար է անդրադառնում հանցագործությունների կանխարգելման և անձանց խախտված իրավունքները վերականգնելու տեսանկյունից: Արդյունքում, խարանի, խտրականության, բռնության և/կամ խոշտանգման ենթարկված անձինք զրկվում են իրենց խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունից, որի հետևանքով հանցագործություն կատարած անձինք պատասխանատվության չեն ենթարկվում, որը ևս խթան է հանդիսանում նոր հացագործությունների:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածում որպես խտրականության պաշտպանված հատկանիշ ներառել սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը,

- Ընդունել «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որում պաշտպանված հիմքերի ցանկում ներառված կլինեն սեռական կողմնորոշվածությունը և գենդերային ինքնությունը,

- ՀՀ Քրեական օրենսգրքի 203-րդ, 329-րդ և 330-րդ հոդվածներում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը համապատասխանաբարներառել որպես խտրականության պաշտպանված հատկանիշ, ատելության հրապարակային հայտարարության և բռնություն գործադրելու հրապարակային կոչի, սպառնալիքի շարժառիթ,

- ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3.1 հոդվածումորպես խտրականության պաշտպանված հատկանիշ ներառել սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը,

- Ապավարչականացնել սեռական ծառայության մատուցումը և համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ վարչական և քրեական օրենսգրքերում,

- Ձեռնարկել գործուն և արդյունավետ քայլեր «Գենդերի իրավական նշումի փոփոխման մասին» ՀՀ օրենքի ընդունման ուղղությամբ,

- Ներպետական հիվանդությունների միջազգային դասակարգիչը համապատասխանեցնել ՀՄԴ-11-ին,

- Ձեռնարկել գործուն և արդյունավետ քայլեր՝ ուղղված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին» ՀՀ օրենքով նախատեսված դրույթները համապատասխան մարմինների կողմից իրականացնելուն,

- Իրականացնել իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված դասընթացներ, հատկապես բժշկական հաստատությունների, ոստիկանություն, հատուկ քննչական ծառայության, ազգային անվտանգության ծառայության, պաշտպանության նախարարության և պետական այլ կառույցների աշխատակիցների շրջանում:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ն (ՆՍՀԿ) ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Է, ՈՐԸ ՀԻՄՆԱԴՐՎԵԼ Է 1998Թ.-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ:
ՀԿ-Ն ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ԵԼՆԵԼՈՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՑ՝ ՆՊԱՍՏԵԼՈՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՏԿԱՊԵՍ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆԸ:

2024|ՁԵԿՈՒՅՑ

ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

CONTACT@NGNGO.NET
WWW.NGNGO.NET

+374 60478989
+374 55478980

© 2024. PUBLISHED BY NEW GENERATION HUMANITARIAN NGO
© 2024. DESIGNED BY NEW GENERATION HUMANITARIAN NGO